Հաստատված է

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի

գիտական խորհրդի 2017թ. ապրիլի 8-ի թիվ 23 նիստում

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ_____Ս. Ա. Առաքելյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1 .Սույն կանոնակարգը սահմանում է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) մեթոդական խորհրդի իրավասությունը, ձևավորման և աշխատանքի կազմակերպման կարգը:

2. ԵՊՀ ԻՄ մեթոդական խորհուրդը տնօրենին կից խորհրդակցական մարմին է, որի գործունեությունն ուղղված է ԵՊՀ ԻՄ-ում տարվող ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների պատշաճ իրականացմանը:

3. Մեթոդական խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է ԵՊՀ ԻՄ կանոնադրությանը, ԵՊՀ ԻՄ ներքին իրավական ակտերին և սույն կանոնակարգին համապատասխան:

2. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Մեթոդական խորհրդի խնդիրներն են՝

1) ԵՊՀ ԻՄ զարգացման ռազմավարական ծրագրի կրթական խնդիրների իրականացման մշտադիտարկումը,

2)ֆակուլտետային մեթոդական խորհուրդների աշխատանքների մշտադիտարկում,

3)ուսումնական գործընթացի կազմակերպումը կանոնակարգող ներմասնաճյուղային իրավական ակտերի մշակումն ու վերանայումը,

4) կրթական ծրագրերի քննարկումը,

5) բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության պլանավորումը,

6) դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների մշտադիտարկումը,

7) ԵՊՀ ԻՄ ներքին իրավական ակտերով սահմանված և ԵՊՀ ԻՄ հիմնական գործունեության հետ կապված այլ խնդիրների իրականացումը:

3. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

5.Մեթոդական խորհրդի կազմում ընդգրկված են ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետը, մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի վարիչը և ներկայացուցիչներ տարբեր մասնագիտական ոլորտներից: Մեթոդական խորհրդի անվանական կազմը հաստատում է մասնաճյուղի տնօրենը՝ երեք տարի ժամկետով:

6.ԵՊՀ ԻՄ մեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է ԵՊՀ ԻՄ զարգացման ռազմավարական ծրագրին համապատասխան՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի առաջարկով, ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի որոշմամբ կամ սեփական նախաձեռնությամբ:

7. Մեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է իր նիստերում, որոնք անցկացվում են աշխատանքային ծրագրին համապատասխան կամ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

8.Մեթոդական խորհրդի նիստերն իրավազոր են խորհրդի անդամների երկու երրորդի ներկայության դեպքում: Խորհրդի նիստերն արձանագրվում են:

9.Մեթոդական խորհուրդն առաջարկություններ և եզրակացություններ է ներկայացնում տնօրենին կամ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին։

10. Մեթոդական խորհրդի կողմից կազմված փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ։ Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք։

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11. Մեթոդական խորհրդի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով։

12. Սույն կանոնակարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով։